

դիմանական, կշտամբական եւ «անպատեհ» խօսքեր վարդապետին երեսին տալէ ետքը կը սպառնայ նաեւ «զամենայն եկեղեցիսդ, զոր դու շինեցեր, ի վերայ գլխոյ քո քակեցից»։ Ի վերջոյ կը հրամայէ, որ թողու պարսկական սահմանն եւ հեռանայ. այլազգ կը սպառնայ մատնել «ի ձեռս աշխարհակալ իշխանաց»։ Վերջին խօսքերս մտատանջութիւն պատճառեցին վարդապետին. դիտէր թէ կաթողիկոսը կարող էր ի գլուխ հանել սպառնալիքը. «զի թագաւորական իշխանութեամբ վարէր զկաթողիկոսութիւնն» եւ ունէր Ամիրգունայ խանն իրեն պաշտպան։ Որոշեց Շամբի ճանապարհով անցնիլ սահմանը։ Բայց ապա քաջալերուած աշակերտներուն սրտաւնդիչ խօսքերէն՝ լաւագոյն համարեցաւ շարունակել յօգուտ ժողովրդեան քարոզչական դործունէութիւնը կուրծք տալով ամէն դժուարութիւններու (Դաւր. 272—273)։ Դիմեց Շահին, որ այժմ Աղուանից Քօթուկլու գիւղը կը գտնուէր, եւ խնդրեց արտօնագիր մը, որ կարենայ շինել եւ նորոգել հայ գիւղերու եւ քաղաքներու մէջ եկեղեցիներ։ Շահը շնորհեց իրեն խնդիրքը եւ վարդապետը դարձաւ ուրախութեամբ իւր գործին։

Մեղքիսեղեկ կ'ամբաստանէ զինքը Ամիրգունայ խանին։ Պատրաստ յանձն առնելու ամէն տառապանք՝ կ'ուղեւորի վարդապետը Երեւան եւ կը ներկայանայ իմանին։ Իր քաղցրահայեաց դէմքը եւ Շահին հրամանագիրը կը համոզեն շուտով իմանը, թէ զուր ամբաս-